


**ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ**

**SCIENTIFIC LIFE**



**LUDWIG PAUL (WITH THE COOPERATION OF PEJMAN FIROOZBAKSH), AN ANALYTICAL BIBLIOGRAPHY OF NEW IRANIAN LANGUAGES AND DIALECTS. BASED ON PERSIAN PUBLICATIONS SINCE CA. 1980, WIESBADEN: “LUDWIG REICHERT VERLAG”, 2022, 444 PP.\***

*Artyom Tonoyan, Hakob Avchyan*



Over the past 40-45 years, numerous articles and monographs have been published in Iran, focusing on both Iranian and non-Iranian languages and dialects spoken within the country. During this period, works have also been published in Iran on Iranian languages and dialects spoken outside the country, encompassing regions such as Turkey, Azerbaijan, Afghanistan, Tajikistan, among others. However, a significant portion of the works from both groups does not always capture the attention of non-Iranian re-

searchers. This partial lack of visibility can be attributed to objective factors such as unavailability and language barriers. Additionally, subjective rea-

---

\* The article was submitted on December 11, 2023.

sons, including a relatively lower interest in scholarly literature published in Iran, contribute to this oversight. One underlying factor for this reality could be a certain viewpoint, regarding the quality of publications in the East (perhaps partially fair in the past, but requiring a completely new approach today), prevalent in Western and Russian academic circles for at least the last two centuries.

This bibliographic book is distinguished by the following points in terms of time frame and content:

1. An extensive bibliography is already available to non-Iranian scholars and researchers living outside Iran, encompassing almost all the literature on Iranian and non-Iranian languages spoken in Iran, as well as on languages and dialects spoken outside modern Iran, published in Iran during 1979/1980-2021 (p. 12).

2. This book fills the bibliographic gap existing in this field for the years mentioned above. As the author notes, the bibliographic lists by Nawabi (1987) and Schmitt (1989) ceased in the mid-1980s (p. 12).

3. In addition to the list of works printed in Iran, constituting approximately 98% of this book, the author includes data on some Persian translations from Russian of little-studied Iranian dialects, as well as works published outside Iran, mainly in Afghanistan and Tajikistan.

4. A concise but significant list is also provided to researchers, encompassing literature published in Western languages in the West related to Iranian languages and dialects (pages 24-31). As the author states, the inclusion of this list aims to fill the bibliographic gap that emerged after Schmitt's (1989) book (p. 24). Therefore, works published after 1985 were selected for this book (see page 24).

This bibliographic work makes a significant contribution to the field of Iranian linguistics and dialectology for the following reasons:

1. It provides specialists engaged in the study of any Iranian language and dialect spoken in Iran with an almost complete list of literature published in the country. This not only facilitates the work of dialectologists and linguists in the initial stages of their research by simplifying the search for previously published works and compiling a comprehensive bibliography but also helps prevent the unintentional repetition of research already published in Persian, which may be unknown to a broader academic audience.

2. The entire bibliographic list, meticulously compiled and presented in transcription with accompanying translations of titles, proves to be an invaluable resource for researchers unfamiliar with the Persian-Arabic writing system.

3. The systematic and analytical approach taken in compiling the bibliographic lists proves truly beneficial for researchers looking for literature on specific languages or dialects. The divisions are not only based on glottonyms but also on the basic components of language. As a result, researchers can efficiently locate works related to, for example, Kurdish phonology, grammar, or lexicon (see the structure and subdivision details on pages 18-20).

4. Additionally, the book alphabetically lists all the literature (pages 288-433), enabling readers to easily access extensive individual lists from Iranian linguists and dialectologists. For instance, the dialectical works of Īrān Kalbāsī are found on pages 343-345, and publications of ‘Alī Ašraf Šādeqī related to Iranian languages and dialects are listed on pages 398-400.

Prof. Paul's work is an exceptionally significant contribution to the field of Iranian dialectology, serving as a valuable gift not only to his Iranian colleagues but also to everyone engaged in Iranian dialectology at large. This presented bibliographic list opens up opportunities for new discussions and

research on topics such as "Linguistics in Iran after the Islamic Revolution", "Is there "Orientalism" in the field of Iranian Linguistics?" and "History of Iranian Linguistics", among others. Particularly in terms of the latter, the limited literature available to the Western reader requires updating.

An unpublished work referenced in Taleghani's article has the potential to be a significant contribution to the study of the history of Iranian linguistics. This lies in its ability to unveil the contributions of Iranians and assess the current state of Iranian linguistics in Iran, especially if its temporal scope is expanded from 1983 to the present day.

Given that the works related to the Persian language are not listed in this book, it can also serve as a good example for compiling a bibliographic list of works published in various directions and methods of studying Persian in the Persian language after Islamic Revolution [1, 2, 3, 4].

## **BIBLIOGRAPHY**

1. Karimi, S., A History of Linguistics in Iran (unpublished), 1983, University of Washington, apud Taleghani, 2009.
2. Nawabi, M., A Bibliography of Iran. Vol. VII, Linguistics, Khajeh Press, Tehran, 1987.
3. Schmitt R., ed. *Compendium Linguarum Iranicarum*, Wiesbaden, Reichert Verlag, 1989.
4. Taleghani A., "Persian Linguistics in the Twentieth Century", *Iranian Studies*. Vol, 42(2), 2009, pp. 275-284.

**Artyom Tonoyan**

Yerevan State University, Chair of Iranian Studies,  
Institute of Oriental Studies NAS RA

**ORCID:** 0000-0002-8740-730X

LUDWIG PAUL (WITH THE COOPERATION OF PEJMAN FIROOZBAKSH), AN ANALYTICAL BIBLIOGRAPHY OF NEW IRANIAN LANGUAGES AND DIALECTS. BASED ON PERSIAN PUBLICATIONS SINCE CA. 1980, WIESBADEN: "LUDWIG REICHERT VERLAG", 2022, 444 PP..

artyom.tonoyan@ysu.am

**Hakob Avchyan**

Yerevan State University, Chair of Iranian Studies

**ORCID:** 0000-0002-5764-2640

hakob.avchyan@ysu.am

**LUDWIG PAUL (WITH THE COOPERATION OF PEJMAN FIROOZBAKSH), AN ANALYTICAL BIBLIOGRAPHY OF NEW IRANIAN LANGUAGES AND DIALECTS. BASED ON PERSIAN PUBLICATIONS SINCE CA. 1980, WIESBADEN: "LUDWIG REICHERT VERLAG", 2022, 444 PP.**

*Արդյուն Տոնոյան, Հակոբ Ավչյան*

Մոտավորապես վերջին 40-45 տարիների ընթացքում Իրանում հրատարակվել են մեծ թվով հոդվածներ և մենագրություններ՝ նվիրված հիմնականում Իրանում խոսվող իրանական և ոչ իրանական, բայց մասամբ նաև Իրանի տարածքից դուրս, այդ թվում՝ Թուրքիայում, Ադրբեջանում, Աֆղանստանում, Տաջիկստանում ևն, խոսվող իրանական լեզուներին և բարբառներին, որոնց մի մասը ոչ իրանցի հետազոտողների ուշադրության կենտրոնում հայտնվում է ոչ միշտ՝ օբյեկտիվ (անհասանելիություն) և սուբյեկտիվ պատճառներով (լեզվին տիրապետելու խնդիր, համեմատաբար նվազ հետաքրքրություն Իրանում լույս տեսնող մասնագիտական գրականության նկատմամբ, որի հիմքում ընկած պատ-

ճառներից մեկը նախորդ դարերից արևմտյան և ռուսական արևելագիտական դպրոցներում տիրապետող որոշակի արևելագիտական հայացքն է և, մասնավորապես, այդ ուսումնասիրությունների որակի առնչությամբ կարծրացած կաղապարը):

Պրոֆ. Լուդվիգ Պաուլի հեղինակած մատենագիտական այս աշխատանքը ժամանակային սահմանների և բովանդակության առումով առանձնանում է հետևյալով՝

1. Արդեն նաև ոչ իրանցի և Իրանից դուրս ապրող հետազոտողների տրամադրության տակ է այնպիսի ծավալուն մի մատենագրություն, որը ներառում է Իրանում խոսվող իրանական և ոչ իրանական, ինչպես նաև ժամանակակից Իրանի սահմաններից դուրս խոսվող լեզուներին և բարբառներին վերաբերող գրեթե ամբողջ գրականությունը՝ հրատարակված 1979/1980-2021 թվականների ընթացքում Իրանում (էջ 12):

2. Այս գրքով փակվում է մատենագիտական այն բացը, որն առկա էր այս ոլորտում վերևում նշված տարիների առնչությամբ: Ինչպես հեղինակն է նշում, Նավաբիի և Շմիտտի մոտ մատենագրական ծավալուն ցանկերը կանգ են առնում 1980-ականների կեսերի վրա (էջ 12):

3. Բացի Իրանում տպված աշխատանքների ցանկից, որոնք կազմում են այս գրքի հիմնական մասը, այսինքն՝ մոտավորապես 98%-ը, հեղինակը ներառել է նաև քիչ ուսումնասիրված իրանական բարբառներին վերաբերող որոշ պարսկերեն թարգմանություններ՝ արված ռուսերենից, նաև աշխատանքներ, որոնք հրա-



տարակվել են Իրանից դուրս՝ հիմնականում Աֆղանստանում և Տաջիկստանում:

4. Հետազոտողների տրամադրության տակ է դրվել նաև մեկ կարևոր ցանկ, որը ներառում է իրանական լեզուներին և բարբառներին վերաբերող՝ Արևմուտքում արևմտյան լեզուներով լույս տեսած գրականությունը (24-31 էջեր): Ինչպես հեղինակն է նշում, այս ցանկի ներառման նպատակը եղել է Շմիտտի (1989 թ.) գրքից հետո առաջացած մատենագիտական բացի լրացումը (էջ 24): Հետևաբար, այս գրքի համար ընտրվել են այն աշխատանքները, որոնք լույս են տեսել 1985 թվականից հետո (տե՛ս էջ 24):

Մատենագիտական այս աշխատանքը կարևոր ներդրում է իրանական լեզվաբանության և բարբառագիտության ոլորտում հետևյալ առումներով՝

1. Իրանում խոսվող իրանական որևէ լեզվի և բարբառի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների տրամադրության տակ արդեն կա նաև Իրանում լույս տեսած գրականության գրեթե ամբողջական ցանկ, որը ոչ միայն հեշտացնելու է բարբառագետի և լեզվաբանի գործը՝ իր հետազոտության առաջին՝ նախկինում հրատարակված աշխատանքների որոնումների և ամբողջական մատենագիտության կազմման փուլում, այլ նաև գերծ է պահելու նախկինում պարսկերենով լույս տեսած և լայն մասնագիտական լսարանի համար անհայտ մնացած որևէ հետազոտության կրկնության հավանականությունից:

2. Ամենայն բժախնդրությամբ և ուշադրությամբ կազմված մատենագիտական ամբողջ ցանկը տրված է տառադարձությամբ և վերնագրերը ուղեկցող թարգմանություններով, որը մեծ օգնություն է պարսկա-արաբական գրին ոչ վարժ հետազոտողների համար:

3. Չափազանց օգնող հանգամանք է նաև այն, որ մատենագիտական ցանկերը կազմված են մեթոդական և վերլուծական այնպիսի մոտեցմամբ, որոնք հեշտացնում են հետազոտողի աշխատանքը որևէ լեզվի կամ բարբառի վերաբերյալ գրականություն փնտրելիս: Բաժանումները կատարվել են ոչ միայն ըստ լեզվի և բարբառի անվանման, այլ նաև ըստ լեզվի բաժինների: Հետևաբար հետազոտողը կարող է շատ արագ գտնել այն աշխատանքները, որոնք, օրինակ, վերաբերում են քրդերենի հնչյունաբանությանը, քերականությանը կամ միայն բառապաշարին (կառուցվածքի և բաժանման մասին տե՛ս 18-20 էջերում):

4. Գրքում տրված է ամբողջ գրականությունը նաև այբբենական հերթականությամբ (288-433 էջեր), ինչը թույլ է տալիս ընթերցողներին գտնել ծավալուն անհատական ցանկեր իրանցի լեզվաբաններից և բարբառագտներից (տե՛ս, օրինակ, Իրան Քալբասիի բարբառագիտական աշխատանքները 343-345 էջերում կամ Ալի Աշրաֆ Սադեղիի՝ իրանական բարբառներին վերաբերող գործերը 398-400 էջերում):

Պրոֆ. Պաուլի այս աշխատանքը չափազանց կարևոր ներդրում է իրանական լեզուների և բարբառների ուսումնասիրության ոլորտում և թանկարժեք նվեր ոչ միայն իրանցի գործընկերներին,

որոնց աշխատանքները այս գրքով դառնում են ավելի տեսանելի, այլ ընդհանրապես իրանական բարբառագիտությանը զբաղվող մնացած բոլորին: Ներկայացված մատենագիտական ցանկը առիթ է նաև նոր քննարկումների և հետազոտությունների համար այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են «Բարբառագիտությունն Իրանի Իսլամական Հանրապետությունում հեղափոխությունից հետո», «Կա՞ր արդյոք օրիենտալիզմ իրանական լեզվաբանության ոլորտում», «Իրանական լեզվաբանության պատմություն» և այլն: Հատկապես վերջինի առնչությամբ արևմտյան ընթերցողի տրամադրության տակ եղած սակավ գրականությունը կարիք ունի թարմացման: Թալեղանիի հոդվածում հիշվող մի աշխատանք, որ մնում է դեռ անտիպ, կարող է չափազանց կարևոր ներդրում դառնալ իրանագիտության պատմության ոլորտում, հատկապես եթե ժամանակային առումով լրացվի և հասցվի մեր օրեր:

Այս գիրքը կարող է նաև դառնալ օրինակ Իրանում հետհեղափոխական շրջանում պարսից լեզվով պարսկերենի ուսումնասիրության տարբեր ուղղություններով ու մեթոդներով լույս տեսած աշխատանքների մատենագիտական ցանկի կազմման համար, քանի որ այս գրքում բուն պարսից լեզվի մասը բացակայում է: